




# ԱՐՈՒԷՍԱԳԷՏ ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԻԳՈԼԵԱՆ

Posted on July 18, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



## Համօ Մոսկօֆեան, Պէյրօւթ, 17 Յուլիս 2010



Հայկական կերպարուեստը այսօր գրաւած է իր ուրոյն տեղը համաշխարհային արուեստի անդաստանին մէջ՝ շնորհիւ տօքթ. Յարութիւն Լիզօլեանի եւ իր սփիւռքահայ ընկերներու ջանքերուն: Կը ներկայացնեմ հաճելի պահ մը բժիկ-արուեստագետին հետ ներքոյիշեալ հարցազրոյցով:

## Համօ Մոսկօֆեան, Պէյրօւթ, 17 Յուլիս 2010



Հայկական կերպարուեստը այսօր գրաւած է իր ուրոյն տեղը համաշխարհային արուեստի անդաստանին մէջ՝ շնորհիւ տօքթ. Յարութիւն Լիզօլեանի եւ իր սփիւռքահայ ընկերներու ջանքերուն: Կը ներկայացնեմ հաճելի պահ մը բժիկ-արուեստագետին հետ ներքոյիշեալ հարցազրոյցով:

**Հարց.** *Կարելի՞ է ներկայացնել ձեր գործունեութիւնը գեղարուեստի աշխարհին մէջ:*

**Պատ.** *Մասնագիտութեամբ բժիշկ եմ, սակայն 30 տարիէ ի վեր կը զբաղիմ գեղանկարչութեամբ եւ գրականութեամբ, գործունեութիւն ծաւալելով արուեստի բազմաթիւ բնագաւառներու մէջ: Մասնագիտութիւն ստացած եմ Հայաստանի եւ Լոնտոնի մէջ: Հիմա ակելի շատ նկարչութեամբ կը զբաղիմ, մասնակցութիւն բերելով բազմաթիւ խմբային ցուցահանդեսներու՝ աշխարհի գաւազան երկիրներու մէջ, Noah's Arkի հովանիին տակ: Նկարչութիւնս բաղկացած է երեք մասերէ: Առաջին՝ զիս հմայած են Սայտայի թագուհին Էլիսան եւ Փիւնիկէի թագաւորները՝ որոնց դիմանկարները պատրաստած եմ: Երկրորդ՝ ունիմ հին լիբանանեան տուններու շարք մը, որոնցմով ցուցահանդես կազմակերպուած էր Հայկազեան համալսարանին մէջ: Երրորդ՝ նիւթս, թաւ ջուրթակով աղջիկներու շարք մըն է:*

Պաստառներս ցուցադրուած են Լիբանանի կողքին, Պէյճիկի, Սաօ Փաօլոյի, Քանատայի եւ այլ երկիրներու մէջ:

**Հարց.** *Դուք լայն կապեր ունեցած եք Հայաստանի արուեստագետներուն հետ: Կարելի՞ է պատմել անոնց մասին:*

**Պատ.** 1963Էն 1970 տարիներուն եղած եմ Հայաստան՝ աւարտելով բժշկական ինստիտուտը: գլխաւոր երեւոյթը այդ թուականներուն եղած էր ԼԵՆՈՆ ՆԵՐՍԻՍԵԱՆԸ՝ Նշանաւոր դերասան Հրաչեայ Ներսիսեանի գաւակը, որ համալսարանի դասախօս էր եւ ինքն էր առաջնորդը բոլոր ազգային շարժումներուն որոնց մասնակցեցան շուրջ 200.000 հայրենասէրներ. 1965թ.ի Հայոց Մեծ Եղեռնի ճանաչման գարթօնքին ՀԵՆՐԻԿ Իգիթեան “Խենթութեան” մէջ էր: Ան էր որ հիմնեց արդի Արուեստի թանգարանը:

**Հարց.** Ի՞նչ կրնաք ըսել “Աւանգարդ” արուեստի շարժման մասին:

**Պատ.** Այդ տարիներուն, այսպէս կոչուած “Աւանգարդ” արուեստի շարժման անդամները իմ ընկերներս եղած են:- Միկաս Աւետիսեան, Էլիբեկեաններ, ՌուտովՖ Խաչատրեան, Մարթին Պետրոսեան, Էտուարտ Խարազեան:

Բուն “Աւանգարդ” գաղափարները սկսան սաղմնաւորուիլ Հայաստանի մէջ, թէեւ կարգ մը ծագումով հրեայ վտարանդիներ իրենք իւրացուցած են իբր թէ “Աւանգարդ”իզմի ստեղծումը Խ. Միուրեան մէջ: Բոլոր “Աւանգարդ” գաղափարները սկսան արմատաւորուիլ Հայաստանի մէջ. գրականութեան մէջ յառաջատարն էր մեծ բանաստեղծ Պարոյր Սեւակը: Իսկապէս դժուար բայց երանելի օրեր էին, եղան Նաեւ Նահատակներ. սակայն ի վերջոյ արուեստն ու գրականութիւնը դարձան առաջնորդող շարժումներ, որոնք յանգեցուցին ազգային ազատագրական պայքարի եւ Հայաստանի անկախութեան՝ իրենց դրական եւ բացասական կողմերով:



